

Ապրիլի 22, 2014

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵԲԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
ՀՀԱՄ-ԾՁԲ- ԲԸԱՀ 03

18 2014թ.

ՀՀ Արմավիրի մարզպետարանը /այսուհետ՝ Պատվիրատու/ ի դեմս աշխատակազմի ղեկավարը՝ Փ.Կարապետյանի, մի կողմից, «ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Վ.Գրքարյանի /այսուհետ՝ Կատարող/, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

1.1 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների մատուցումը (այսուհետև՝ Ապրանք աշխատանքներ և ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

1.2 Ծառայության մատակարարումը սկսում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից, և իրականացվում է սույն պայմանագրի N 3 հավելվածով՝ գնման ժամանակացույցին համապատասխան:

1.3 Մեկ տեսակի գերազանցմամբ ծառայության հանձնումը չի ծածկում այլ տեսակի ծառայության բերի հանձնումը:

**2. ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԸ**

2.1 Կատարողը Ծառայությունը մատուցում է Պատվիրատուին:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ծառայությունից, եթե ծառայության ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված ստանդարտին չհամապատասխանող ծառայություն:

ա) Պահանջել հատուցելու ծառայության անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը:

բ) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ծառայությունով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը:

գ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը:

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս ծառայություն, ապա.

ա) պահանջել լրացնելու Ծառայության պակաս մատուցումը,

բ) հրաժարվել մատուցված ծառայության և դրա համար վճարելուց, իսկ եթե Ծառայության համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե մատուցվել է տեսակի պայմանի խախտմամբ ծառայություն, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ծառայությունը և հրաժարվել մնացած Ծառայությունից:

բ) հրաժարվել մատուցված բոլոր Ծառայություններից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ծառայությունների փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ծառայությունով:

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ծառայության մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով վճարել է Ծառայության համար՝ սույն պայմանագրով նախատեսված փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ծառայությունը այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

3.1.7 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

3.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ծառայություն, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի

31.0 վրի 19.05/18.



համար ընդունելի ժամկետում:

բ) Բազմիցս խախտվել են ծառայության մատակարարման ժամկետները:

3.1.8 Հետևել Մառայությանը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

### 3.2 Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին և համաձայնագրին համապատասխան մատակարարված Մառայության ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Կատարողի հանձնած Մառայությունից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Մառայության պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Մառայությունը ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Մառայության, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ժանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Մառայության բնույթից և նշանակությունից:

3.2.5 Սույն պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս վնասները:

### 3.3 Կատարողը իրավունք ունի՝

3.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Մառայությունը:

3.3.2 Պատվիրատուից պահանջել հատուցելու վնասները, եթե Կատարողը Պատվիրատուի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով մատուցել է Մառայության՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Պատվիրատուից պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Մառայության համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն եականորեն խախտել է սույն պայմանագիրը:

3.3.4.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն եական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Մառայության համար վճարելու ժամկետները:

3.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատուցել ծառայությունը:

Վաղաժամկետ մատուցված և պատվիրատուի կողմից ընդունված Մառայությունը հաշվարկվում է հաջորդ փուլում մատուցված ենթակա Մառայության որակի հաշվին:

### 3.4 Կատարողը պարտավոր է՝

3.4.1 Պատվիրատուին մատուցել ծառայությունը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 1.2 կետին համապատասխան՝ Մառայությունը Պատվիրատուին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Մառայության մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Մառայություն:

3.4.5 Պատվիրատուին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածներով նախատեսված որակի Մառայություն՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել Մառայության որակը հավաստող ԳՅ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Առանձին փուլում թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, հաջորդ փուլում (Փուլերում) լրացնել թերի մատուցումը:

3.4.7 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.8 Պատվիրատուին մատուցել Մառայության պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.9 Սույն պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Ապրանքի մատակարարումը կտրոնային եղանակով իրականացնելու դեպքում կտրոնների գործողության (վավերականության) ժամկետ սահմանել կտրոններ տրամադրելու պահից առնվազը մեկ տարի:



3.4.11 Սույն պայմանագրի 3.4.11 կետում նշված ժամկետում կտրոնները չիրացնելու դեպքում ողջամիտ ժամկետով երկարաձգել կտրոնների գործողության ժամկետը կամ հետ ընդունել կտրոնները և կատարել վերահաշվարկ

#### 4. Ծառայության գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայության յուրաքանչյուր միավորի գինը, ներառյալ ԱԱՀ-ն, ներկայացված է սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 2 հավելվածով: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Գնի ցանկացած փոփոխություն իրականացվում է միայն կողմերի համաձայնությամբ:

4.3 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով հավելված N 2 նախատեսված ամսում , ( եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ի հետո , ապա վճարումը կատարում է 20 բանկային օրվա ընթացքում), նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որ դրամական միջոցները բավարարում են, բայց ոչ ավելի, քան մինչև 25.12.2014թ.:

#### 5. Ծառայության որակը

Կատարողն երաշխավորում է մատուցված ծառայության որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

#### 6. Ծառայության մատուցումը և ընդունումը

6.1 Կատարողը Ծառայությունը մատուցում է սույն Պայմանագրով նշված ժամկետներով և ժամկետներում:

6.1.1 Կատարողը՝ Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում մատուցված ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.3 Ծառայությունը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

#### 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Կատարողը պատասխանատվություն է կրում մատուցած Ծառայությունների որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատուցված ժամկետների պահպանման համար:

7.2 Կատարողի կողմից սույն պայմանագրով ստանձված պարտավորությունների չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում զանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,5%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարներից:

7.4 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից զանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,05%-ի չափով:

7.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Կատարողի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

#### 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱՃՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով



պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն իհայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմքի կհանդիսանային գնման պայմանագրի չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածովը:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ:

Սույն պայմանագիրն չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված կարգով տվյալ գնումն կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Շառայության մատուցման ժամկետը կարող երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ

- ա) Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.
- բ) եթե դա Պատվիրատուի գործողության կամ անգործության հետևանք է:

9.4 Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և պայմանագրի կողմը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա Գնորդը պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1,2, 3 հավելվածները՝ բաղկացած 3 թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունք:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

**Կատարող**

Արմավիր, մարզպետարան

<< ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ >> ՍՊԸ

Ք.Արմավիր, Արուսյան 71

Ք.Երևան, Բայրոնի փող.3

Արմավիր ՏԳԲ

<< Էյ-Էս-Բի-Այ բանկ Հայաստան ՓԲԸ

հ/հ 900331131053

հ/հ 2530003667300100

2422 04415276

2422 01557589



Աշխատակազմի ղեկավար՝

Փ.Կարապետյան



Տնօրեն՝

Վ.Գրաբյան



Հավելված N 1

18. ապրիլ 2014թ.  
ՀՀԱՄ-ՇՁԲ-ԲԸԱՀ 03

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

Գործառնական դասակարգման 01 խումբ, 01 ենթախումբ,  
03 ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին գնման  
ենթակա ծառայության

Հիմնարկի անվանումը՝

Արմավիրի մարզպետարան

1	Գնման առարկան ծառայության անվանումը	ՀՀ Արմավիրի մարզպետարանի ծառայողական Toyota Prado մակնիշի ավտոմեքենայի շարժիչի յուղի փոխարինում
---	-------------------------------------	---

Պատվիրատու

ք. Արմավիր, Արշակյան 71

ՀՀ Արմավիրի մարզպետարան աշխատակազմ  
Արմավիր Ս. Գ.Բ.

Հ/Հ 900331131053  
ՀՎՀՀ 04415276

Փ. Կարապետյան

Կ.Տ

(ստորագրություն)



Կ.Տ

Կատարող

<< ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ >> ՍՊԸ  
Ք. Երևան, Բայրոնի փող. 3

<< Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ

Ի/Ի 2570003667300100

ՀՎՀՀ 01857589

Ա. Վ. Գրարյան

(ստորագրություն)



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Խազ. Դրամ

h/h	Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հորվածք	Ընդամենը տարեկան	Սահմանափակում է ֆինանսավորել 33 2014թ.-ի պետական բյուջեից, ընդ որում											
				I եռ.			II եռ.			III եռ.				IV եռ.	
				Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս-սեպտեմբեր	Փոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	Toyota Prado մակնիշի ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություն	2	3-4:15	4	6	7	8	9	10	11	12	13	14	15	97.6
	<i>Ընդամենը</i>	4252	97.6			97.6	97.6	97.6	97.6	97.6	97.6	97.6	97.6	97.6	97.6

Պատվիրատու՝

Ք. Արմավիր, Արավյան 71  
33 Արմավիրի մարզպետարան աշխատակազմ



Ք. Կարապետյան

Կ.Տ (ստորագրություն)

Կատարող

<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ >>ՍՊԸ

Ք. Երևան, Բայրոնի փող.3

<< ԷլՋ-Էս-Բի-Սի քանկ Հայաստան ՓԲԸ

Խ/հ 15 7 000 366 2306100  
ՀՅՀՀ 01537689

Կ. Գզարյան

Կ.Տ (ստորագրություն)



Գնման ժամանակացույց

Ը/Կ	Գնման ենթակա ապրանքների, ծառայությունների անվանումը	Չափման միավորը	Միավորի նախահաշվային գինը դրամ	Նախատեսվում է գնել								Ընդամենը	
				1-ին եռ.		2-րդ եռ.		3-րդ եռ.		4-րդ եռ.			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը		
1	Toyota Prado մակնիշի ավտոմեքենայի տեխնիկական ապաստարկման ծառայություն	3	դրամ	5	6	7	8	9	10	11	12	13	14
			97600	X		X	97.6	X		X		1	97.6
	ԸՆԴԱՄԵՆԸ			X		X		X		X			97.6

հազ. Դրամ

Պատվիրատու

Ք. Արմավիր, Արավյան 71

ԴԴ Արմավիրի մարզպետարան աշխատակազմ

Արմավիր Ս. Գ.Բ.

Հ/Դ 900331131053

Հ/ՀՀ 04415276

Փ. Կարապետյան

Կ.Տ

(ստորագրություն)



Կատարող

<< ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ >> ՍՊԸ

Ք. Երևան, Բալթիկի փող. 3

<< Էլչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ

հ/հ 1552000366 7300100

Հ/ՀՀ 01557589

Վ. Գգրարյան

(ստորագրություն)

